ՄԵԹՆԻ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

# Հ. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ԱԿՈՒՄԲԷ - ԱԿՈՒՄԲ



Ազիրեան ակումբին մէջ



Նիկոլ Դուման ակումբին մէջ:
Լուսանկարները՝ ՍԹԻՒՏԻՕ ԱՇՆԱԿԻ

*Երէկուան մեր թիւով տուած էինք Մեթնի ընտրութիւններուն առիթով Հ. Յ. Դ. ընտրական մեքենային համակարգը, կեդրոնանալով առաւելաբար Ընտրական Կեդրոնական Մարմինի աշխատանքներուն վրայ:*

*Այսուհետեւ պիտի անդրադառնանք ընտրական այն աշխատանքներուն, որոնք կը կատարուին Հ. Յ. Դ. ակումբներուն մէջ: Ըսած ենք արդէն բազմիցս, որ ընտրական աշխատանքներուն բուն գործելադաշտը մեր ակումբներն են, որոնք արդէն լծուած են լուրջ աշխատանքի: Երկար տարիներէ ի վեր մեր ակումբները ընտրական գործին մասնագէտը դարձած են եւ իրենց կազմակերպուածութեամբ միշտ ալ արժանացած են լիբանանեան հանրային կարծիքին մեծ ուշադրութեան: Իւրաքանչիւր ակումբ ունի իր յատուկ մեքենան, որ անշուշտ կը գործէ Ընտրական Կեդրոնական Մարմինի ցուցմունքներով եւ անմիջական ղեկավարութեան տակ:*

*«Ազդակ» երէկ այցելեց Պուրճ Համուտի մէջ երկու ակումբներ՝ Հ. Յ. Դ. «Նիկոլ Դուման» եւ Հ. Յ. Դ. «Ազիրեան»: Տեղւոյն ընտրական պատասխանատուներուն հետ մեր տեսակցութեան ընթացքին, ի յայտ եկաւ, որ երկու շրջաններուն պարագային հաւասարապէս մեր ժողովուրդը ինչպէս միշտ, այս անգամ եւս դրական կ'արձագանգէ մասնակցութեան, նոյնիսկ եթէ ընտրութիւնը ուղղակիօրէն մեր համայնքին չ'առնչըւիր: Բայց մեր ժողովուրդը լաւ, շատ լաւ ըմբռնած է, թէ այս ընտրութիւնը մեզի համար բազկերակի չօշափում է յառաջիկայ մեծ ընտրութեանց համար, հետեւաբար ան մի՛շտ պատրաստ է ընդառաջելու կուսակցութեան կոչին, համոզուած ու հաւատալով՝ Դաշնակցութեան քաղաքական որոշումներուն:*

*Նիկոլ Դումանի թէ Ազիրեանի պարագային, մեր ակումբներուն ընտրամեքենան իրապէս կը բանի ժամացոյցի նման: 25-30 տղաք ու աղջիկներ կը շրջին տունէ - տուն, կը բացատրեն այս ընտրութեան մասնակցութեան կարեւորութիւնը, եւ ընտրական մարմիններու պատասխանատուներուն իսկ հաստատումով՝ ձեռնունայն չեն վերադառնար ժողովուրդին ջախջախիչ տոկոսին մօտէն: Ընտրական քարտերը գրեթէ ամբողջացած են, ընտրական տախտակները մեծաւ մասամբ ճշգրիտ են եւ մեր գանգուածը իբրեւ մէկ ամբողջութիւն պատրաստ է Յունիս 2ին երթալու եւ քուէարկելու Դաշնակցութեան զօրակցութիւնը վայելող թեկնածուին:*

## «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ» ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐՈՒՆ ՅԱՋՈՂ ԵԼՈՅԹՆԵՐԸ



(Լուսանկարը՝ Պ. ՃԱՐՈՒԿԵԱՆԻ)

Երէկ, Հինգշաբթի 16 Մայիսին սկսաւ Համազգայինի «Քնար» եւ «Գայիանէ» պարախումբերուն տարեկան միացեալ ելոյթներուն շարքը, որ պիտի երկարի մինչեւ 26 Մայիս:

Աւելի քան երկու ժամուան տեւողութեամբ «Մոնօ» թատերասրահին բեմը «յորդեցաւ» շուրջ 50 մանուկ, պատանի եւ երիտասարդ պարողներով, որոնք ներկայացուցին հայկական եւ օտար պարերու ընտրանի մը՝ մեծապէս խանդավառելով ներկաները:

«Քնար»ի հիմնադրութեան 45ամեակին՝ այս ելոյթը խօսուն վկայութիւն մըն է հայ մշակոյթի գոյատեւման հաւատացողներուն աշխատանքին:

## ԷՃԵՒԻԹ ՊԻՏԻ ՉՀՐԱԺԱՐԻ...

Շարունակուած Ա. էջէն

Էճեւիթի Ժողովրդավար Ձախ Կուսակցութիւնը հերքած է կայքի մը այն տեղեկագիրը, թէ տնտեսութեան նախարար Քեմալ Տերվիշ Մ. Նահանգներու դեսպանին յայտնած է, որ Էճեւիթ Շաբաթ օր պիտի հրաժարի եւ Նոյեմբերի համար ընտրութեանց կարգադրութիւններ պիտի ընէ:

Ելեւմտական շուկաները որոշ անկում մը արձանագրած են տեղեկագիրին լոյսին տակ, այն մտավախութեամբ, թէ հրաժարում մը կրնայ քաոսային վիճակ ստեղծել եւ վնասել Դրամական Միջազգային Ֆոնտին փրկարար ծրագիրին:

Ֆոնտին մէկ պատուիրակութիւնը ներկայիս Թուրքիա կը գտնուի՝ ստուգելու համար, թէ յառաջդիմութիւն արձանագրուա՞ծ է 16 միլիառ տոլար արժողութեամբ ծրագիրին գործադրութեան մէջ եւ որոշելու, թէ փոխատուութեան նոր գումար մը պիտի յատկացուի՞ Թուրքիոյ:

Տեղեկագիրը հերքուած է նաեւ ամերիկեան դեսպանատան եւ Տերվիշի կողմէ, որ անցեալ տարի նշանակուած էր, որպէսզի օգնէ երկիրը դուրս բերելու ելեւմտական իր ծանրակշիռ տագնապէն:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. էջէն

Կրասնոտար մեկնող հայկական պատուիրակութեան մաս պիտի կազմեն 6 խորհրդարանականներ, արտաքին գործոց նախարարութեան 2 աշխատակիցներ եւ ներքին գործոց փոխ նախարարը: Անոնց պիտի միանան նաեւ պատգամաւորներ՝ Ռուսիոյ խորհրդարանէն:

## ԴԱՄԱՍԿՈՍ ԲԱՐԿԱՑԱԾ...

Շարունակուած Ա. էջէն

*քաղաքացիները կը նկատէ սուրիացիները՝ առանց լսելու անոնց տեսակէտը:*

*Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Երեքշաբթի օր ստորագրած էր նոր օրէնքը, որ առիթ կու տայ իշխանութիւններուն յաւելեալ հսկողութեան տակ առնելու Ամերիկա այցելել փափաքողները: Օրէնքին հիման վրայ, մուտքի արտօնագիրի դիմող անձը վիզա կը ստանայ, երբ ստուգուի, թէ ան որեւէ վտանգ չի սպառնար Միացեալ Նահանգներուն:*

*Սուրիա տակաւին պաշտօնապէս չէ հակադարձած ամերիկեան նոր օրէնքին:*

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԻՈՆ

## «ՀԱՅԵՐԷՆ ԽՕՍՈՂ ԹՈՒՐՔԵ՞Ր ԹԷ ԻՍԼԱՄ ՀԱՅԵՐ»

*Կազմակերպութեամբ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամպիոնին, «Հայերէն խօսող թուրքե՞ր թէ իսլամ հայեր, հիւսիս արեւելեան Թուրքիոյ համշէնները» թեմայով ֆիլմի ցուցադրութիւն եւ դասախօսութիւն տեղի ունեցաւ երէկ, 16 Մայիս 2002ին, Հայկազեան Համալսարանի մէջ:*



*Ձեռնարկի սկիզբը ցուցադրուեցաւ կարճ ֆիլմ մը՝ համշէնցիներու առօրեան ներկայացնող. ապա հայագիտական ամպիոնի վարիչ դոկտ. Արա Սանճեան ներկայացուց օրուան դասախօսը՝ Հարաւային Քալիֆորնիոյ համալսարանին մէջ դոկտորայի թեկնածու, «Կասպեան Շրջանի Աշխարհաքաղաքականութիւնը» անգլիատառ գիրքի հեղինակ Յովհան Սիմոնեանը:*

*Յ. Սիմոնեան ներկայացուց համշէնցի հայերու պատմութիւնը անդրադառնալով միջին դարերուն անոնց իսլամացումին եւ գաղթերուն: Բանախօսը կուգահեռ մը գծեց մէկ կողմէ համշէնցիներու մասին պատմականօրէն հաստատուած տուեալներու եւ Համշէնի պատմութեան մասին համշէնցիներու ունեցած համոզումներուն միջեւ: Արդարեւ, հակառակ հայերէն լեզուն խօսելուն եւ կարգ մը հայկական աւանդութիւններու իրենց պահպանումին, համշէնցիներ յաճախ կը մերժեն իրենք զիրենք հայեր նկատել:*

*Յ. Սիմոնեան անդրադարձաւ նաեւ Թուրքիոյ հիւսիս արեւելքէն (Սեւ Ծովի Հարաւ–Արեւելք) Կեդրոնական Ասիա, Վրաստան եւ այլ տարածքներ համշէնցիներու գաղթին եւ իրենց ինքնութեան եւ դիմագիծի պահպանման հարցերուն:*

*Լուսանկարներու եւ սահիկներու ցուցադրութեամբ ճոխացած դասախօսութեան աւարտին, Յ. Սիմոնեան պատասխանեց ներկաներու հարցումներուն:*

ՏԵՍԱԿԷՏ

## ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՒՈ՞ՒՆՔ Է ԹԷ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

*Ժողովրդավար որեւէ երկրի մէջ, հետեւեալ հարցը միշտ ալ գոյութիւն ունի. քաղաքացիին համար քուէարկութիւնը իրաւո՞ւնք է թէ պարտաւորութիւն:*

*Հաւանաբար պարզապէս մտքի մարզանք է այս հարցին հոլովումը, որովհետեւ անիկա «պարտադիր» պատասխան մը չունի:*

*Զուիցերիոյ մէջ, քուէարկութիւնը թէ՛ իրաւունք է, թէ՛ պարտաւորութիւն: Կարելի չէ անջատել մէկը միւսէն. իրաւունքը եւ պարտաւորութիւնը միաձուլուած են զուիցերիացիին ուղեղին մէջ, այն զուիցերիացիին, որուն երկիրը ժողովրդավար կարգերու լաւագոյն օրինակներէն մէկը կը հանդիսանայ աշխարհի տարածքին:*

*Ֆրանսայի մէջ երեւոյթը տարբեր է: Հոն ձեւով մը կարծէք ֆրանսացի քաղաքացիին խիղճին ու դատողութեան վիճակուած է քուէարկելը, որ սակայն կրնայ բարդութիւններ յառաջացնել, ինչպէս պատահեցաւ նախա-*

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Շար.ը՝ էջ 10

## ԸՆՏՐԱՔԱՐՏԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է

Երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն կարելի չէ մասնակցիլ առանց ընտրական *քարտի*:

Բոլոր այն քաղաքացիները, որոնք ընտրական *քարտ* չունին, կրնան դիմել Հ. Յ. Դ. հետեւեալ ակումբները.

●ՊԷՅՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ
Ազատամարտ ակումբ - Էշրեֆիէ՝ 01/449924
Ռոստոմ ակումբ - Հայաշէն՝ 01/328471
Նշան Փալանճեան ճեմարան - Արեւմտեան Պէյրութ՝ 01/375412
Տիգրան Ծամհուր ակումբ - Մար Միխայէլ՝ 01/580141

●ՖԱՆԱՐԻ ԵՒ ՌԱՈՒՏԱՅԻ ՇՐՋԱՆ
Է. Ակնունի ակումբ - Ֆանար՝ 01/891546
Ռաուտայի ակումբ՝ 01/683372

●ԱՆԹԻԼԻԱՍԻ ՇՐՋԱՆ
Աղբալեան ակումբ՝ 04/722902
Նաքքաշի կեդրոն՝ 04/410691
Ժունիէի ակումբ՝ 09/933096

●ԶԱԼՔԱՅԻ ՇՐՋԱՆ
Գարեգին Նժդեհ ակումբ՝ 01/877661

●ՆԱՀՐ ՄՕԹԻ ՇՐՋԱՆ
Անի ակումբ՝ 01/895481

●ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՇՐՋԱՆ
Սարդարապատ ակումբ - Մարաշ՝ 01/262949
Ռուբէն ակումբ - Նորաշէն՝ 01/254322
Դրօ ակումբ - Արագած՝ 01/268647
Ազիրեան ակումբ - Սիս՝ 01/261636
Քաղաքապետարանի շէնքեր - «Բաբգէն Սիւնի» կեդրոն՝ 01/489477
Թեհլիրեան ակումբ - Ամանոս՝ 03/587498
Մար Եուսէֆի ակումբ՝ 01/254709
Նիկոլ Դուման ակումբ - Թրատ՝ 01/260912
Քաղաքապետարանի շէնքեր՝ 01/263440

*Հ. Յ. Դ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ*




NARRA TRADING & GENERAL SERVICES CO. S.A.R.L.
Որոշումի թիւ 47/1
ՆԱՐԱ ԹՐԷՅՏԻՆԿ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ս.Պ.Ը.
(Սեփականատէր՝ Վահէ Մանուշակեան)
ՎԻԵԹՆԱՄԷՆ ԵԹՈՎՊԻԱՅԷՆ ՍՐԻ ԼԱՆՔԱՅԷՆ ԵՒ ՖԻԼԻՓԻՆԷՆ ՍՊԱՍՈՒՀԻՆԵՐՈՒ ԱՊԱՀՈՎՈՒՄ
●Անմիջական յանձնում եւ ապահովագրութիւն:
●Մեր նշանաբանը՝ անկեղծութիւն, ապահովութիւն,
●Մասնաւոր գիներ, վճարման դիւրութիւն եւ երկար տարիներու փորձառութիւն:
Պաուշրիէ, City Hospital հիւանդանոցի փողոց, «Էլլի» Դրամատան շէնք, 4րդ յարկ: Հեռ. 03/324799, 01/897633 եւ 03/489989




ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

**ՆԱՄԱԿԱՆԻ**

## ՇՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ

Վերջերս Պուրճ Համուտի մէջ շատցած են տուներուն մէջ շուն պահելու երեւոյթները՝ միշտ հաւատարիմ մնալով հռչակաւոր դերասան եւ անասուններու իրաւունքներու պաշտպան Պրիժիթ Պարտոյի այն թելադրանքին, որ կ՚ըսէ. «Պահպանեցէ՛ք անասունները եւ մանաւանդ շուները»:

Շրջանի փողոցներուն մէջ յաճախ կը հանդիպինք գեղեցիկ շղթայով կապուած շուներու, որոնք Փարիզի մեջ եղածներուն նմանողութեամբ ամէն քայլափոխի կը ձգեն իրենց աղտը: Սակայն Փարիզի քաղաքապետութիւնը յատուկ միջոցներ կը կիրարկէ այդ աղտերէն ձերբազատելու համար:

Վերջերս հանդիպեցայ ծանօթի մը, որ իր շունը կը պտըտցնէր:

«Լաւ շուն կ՚երեւի, ուրկէ՞ բերած ես», հարցուցի:

«Անշուշտ լաւ շուն պիտի երեւի, որովհետեւ ան կ՚արժէ 2000 տոլար, գրեթէ ամէն օր կը լոգնայ յատուկ օճառով, ամէն ամիս բժիշկի կը տանիմ, իսկ իր ճաշը Գերմանիայէն կու գայ: Բայց հակառակ անոր որ անիկա 2000 տոլար կ՚արժէ, այսուհանդերձ ես բարեկամէ մը զայն գնեցի 850 տոլարով», ըսաւ ան գլուխը շարժելով:

Չկրցայ համոզուիլ. ան իր զաւկին նախակրթարանի կրթաթոշակը չի կրնար վճարել, բայց չի զլանար իր շան լաւ հոգ տանելէ:

Թող ներեն ինծի Պրիժիթ Պարտոն եւ շուները. ես անոնց դէմ չեմ: Բայց անոնք թող ապրին իրենց յատուկ տնակներուն մէջ...

ԿԱՅԾՔԱՐ

# ԼՈՒՐԵՐ ՋԱՒԱԽՔԷՆ

### ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

*Վրաստանի մէջ աւարտած է տեղական ինքնակառավարման մարմիններու թեկնածութիւններուն առաջադրումը:*

*Ախալքալաքի շրջանի 21 գիւղական վարչութիւններու համար արձանագրուած է 251 թեկնածու: Նշենք, որ իւրաքանչիւր վարչութեան մէջ պիտի ընտրուի 5 հոգի:*

*Ախալքալաքի քաղաքային վարչութեան 7 տեղերուն համար առաջադրուած է 50 թեկնածու: Աւելի համեստ են Նինոծմինտայի շրջանի արդիւնքները: Շրջանի 10 վարչութիւններուն 5ական տեղերուն համար արձանագրուած է 123 թեկնածու:*

### ԹՈՒՐՔ ՄԵՅԽԷԹՑԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԱԽԱԼՑԽԱՅԻ ՄԷՋ

*Հաւաստի աղբիւրներէ քաղելով իր տեղեկութիւնները՝ «Ա. Ինֆօ» լրատուական գործակալութիւնը կը տեղեկացնէ, որ այս տարուան ընթացքին Ախալցխայի մէջ յատուկ հիմնադրամներու միջոցով հայերէ գնուած տուներու մէջ արդէն վերաբնակած են թուրք-մեսխէթցիներու 17 ընտանիք. իւրաքանչիւր ընտանիք, միջին հաշուով, բաղկացած է քառասուն հոգիէ:*

*Պէտք է նշել նաեւ այն փաստը, որ նոր բնակիչները կը կրեն վրացական մականուններ:*

### ԱԳԱՐԱԿԻ ՊՂԻՆՁԻ ԳՈՐԾԱՐԱՆ

## ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՃԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ

*Անցեալ տարի միջազգային շուկային մէջ գունաւոր մետաղներու գիներուն անկման պատճառով, Զանգեզուրի պղինձի գործարանի աջակցութեամբ աշխատող Ագարակի պղինձի գործարանը չյաջողեցաւ ապահովել նախատեսուած 40 առ հարիւր արտադրական աճը:*

*Սակայն, ըստ Զանգեզուրի գործարանի տնօրէն Մաքսիմ Ցակոբեանի, մինչեւ իսկ այդ պայմաններուն մէջ գործարանը կրցած է ոչ միայն ապահովել ձեռնարկութիւններու աշխատանքին կշռոյթը, այլեւ մարզին մէջ ստեղծուած է 15 արբանեակ ձեռնարկութիւններ, որոնց մէջ կ՚աշխատի 500 հոգի՝ 55 հազար դրամ միջին աշխատավարձով:*

*Ըստ գործադիր տնօրէնին, արտադրութեան աճին համար Ագարակի պղինձի գործարանին մէջ ներկայիս կան անհրաժեշտ բոլոր պայմանները: Նախատեսուած աճին գործարանը կրնայ հասնիլ եթէ ոչ յառաջիկայ Յունիսին, ապա այս տարուան ընթացքին:*

## 2,4 *ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ*

*Ըստ բեռնամաքսային յայտարարագիրներու, այս տարուան Յունուար - Մարտ ամիսներուն մարդասիրական օգնութեան ձեւով Հայաստան մտած է 16,565,4 թոն ապրանք, որուն արժէքը կը կազմէ 2,4 միլիոն տոլար:*

*Ստացուած օգնութեան 83,93 առ հարիւրը կազմած են քիմիագիտութեան եւ անոր հետ կապուած ճարտարարուեստի ճիւղերուն արտադրանքը:*

**«ԱԶԴԱԿ»Ի ՀԵՌԱՁԱՅՆԻ ԹԻՒԵՐԸ**

«ԱԶԴԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

# «ԲԱԳԻՆ»Ի

## (ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ)

## *ԼՈՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ*

*Գործը ընթացքի մէջ էր, անաղմուկ, երեքս ալ ձեռագիր պատրաստած էինք, երբ Պէյրութ ժամանեց Կ. Փոլատեան: «Համազգային»ը կ՚ուզէր վերահրատարակել «Ակօս»ը՝ գինք նկատի ունենալով իբրեւ գլխաւոր խմբագիր: Զղժգոհեցանք: Ընդհակառակն, ուրախութեամբ ընդառաջ գացինք: Երեքս Կ. Փոլատեանը հրաւիրեցինք Ռաուշէի ծովահայեաց սրճարանը՝ ուրիշներու հետ (որոնց շարքին՝ Վահէ Սէթեան, Հրաչ Տասնապետեան, Շ. Թորիկեան), գաւաթ մը գինիի շուրջ ողջունեցինք նոր «Ակօս»ի գաղափարը եւ խոստացանք մեր ձեռագիրները յանձնել իրեն, բոլորուիլ իր շուրջ:*

*Անցաւ մէկ - երկու շաբաթ: Ճեմարանի սրահին մէջ ողջերթի գինեձօն մը տրուեցաւ ի պատիւ Կ. Փոլատեանին: Պիտի մեկնէր ու շուտով վերադառնար՝ ստանձնելու համար իր նոր պաշտօնը:*

*- Բարի երթուդարձ, սիրելի՛ Փոլատեան,- ըսի՝ իր կենացը բարձրացնելով բաժակս: - Կը խոստանաս ամէնաուշը Նոյեմբերի սկիզբը հոս ըլլալ: Բայց եթէ Դեկտեմբերի վերջն ալ եկած չըլլաս, կը վշտանա՞ս, եթէ մենք երեքս հրապարակ հանենք մեր հանդէսը Յունուարին:*

*- Ո՛չ, երբեք, իրաւունք կ՚ունենաք:*

*Կ. Փոլատեան մեկնեցաւ ու չկրցաւ յարգել (ինչո՞ւ, ի՞նչ պատահեցաւ) վերադարձին ժամկէտը:*

*Նորէն հանդիպում ունեցայ Օշականին եւ Պոյաճեանին հետ: Քիչ մը տատամսիլ սկսած էին: Ի վերջոյ երկուքն ալ շարքային էին: Կուսակցութիւնը, առկէ անդին, հաշտ աչքով պիտի դիտէ՞ր մեր, իրենց առնելիք քայլը.*

*- Խե՞նթ էք,- ըսի,- կուսակցութիւնը եթէ իմանայ, վստահ եմ, որ ուրախ պիտի ըլլայ եւ քաջալեր հանդիսանայ մեզի:*

*Շաբաթ մը չանցած, ճիշդ 23 Դեկտեմբերին (1960) գաւազանը հատիկ - հատիկ սալարկին զարնելով Կ. Սասունին եկաւ դարմանատունս՝ յաղթանակին ապահով զօրավարի մը երեւումով:*

*Սովորական մէկ - երկու խօսքէ ետք բռնեց հարցին օձիքէն.*

*- Շատ լաւ մտածուած է եւ լաւ կորիզ մը կազմած էք արդէն: Բայց մեր կեանքին մէջ, գիտես, զուտ անհատական ձեռնարկները երկար կեանք չեն ունենար, կու գան ու կ՚անցնին աստղի պէս:*

*Եւ առանց թոյլ տալու, որ ընդմիջեմ՝*

*- Կուսակցութիւնը կրնայ հովանաւորել ձեզ եւ տալ ամուր կռուան մը ձեռնարկին:*

*- Մեր բաղձանքն է գրական ապահով ուղի մը ունենալ, երկարագնաց ուղի մը բանալ նոր սերունդին համար, - խօսք առի այս անգամ:- Կուսակցութենէն աւելի չենք սպասեր: Բայց լաւ կ՚ըլլայ մեկնակէտին ճշդել սկզբունքները:*

*- Նախ քիչ մը պիտի լայնցնենք ձեր կորիզը՝ աւելի բազմադէմ եւ հանգամանաւոր խմբագրական մարմին մը ունենալու մտահոգութեամբ,- յարեց «Լեռներու խորհուրդ»ով աւլցուն գրչի վաստակաւորը:*

*- Հնարաւոր է,- ըսի,- սակայն կան նաեւ անմիջապէս որդեգրելի ուրիշ պայմաններ:*

*- Ի՞նչը, օրինակ:*

*- Եթէ կուսակցութիւնը պիտի առնէ ձեռնարկը իր հովանիին տակ, տպաքանակը պիտի ըլլայ առնուազն երկու հազար, սպառելի:*

*- Աղէ՛կ: Ուրի՞շ:*

*- Մէկ կամ երկու մնայուն խմբագիր, անշուշտ ամսականաւոր, իսկ աշխատակիցները վարձատրելի՝ էջ գլուխ գոնէ երկու տոլարով:*

*- Արդար է եւ կարելի:*

*- Գրական- մշակութային բնոյթ պիտի ունենայ ձեռնարկը, գաղափարական ուղեգիծ ու ներշնչում անտարակոյս, բայց պիտի չըլլայ, երբեք, քաղաքականութեան կրկէս: Ընդհակառակն, այլ գաղափարաբանութեան ծառայող գրող մը պիտի հիւրընկալուի հարազատի պէս, եթէ լոկ գեղարուեստի դրոշմով գրութիւն մը բերէ մեզի:*

*- Դաշնակցական մամուլը միշտ ալ յարգած է ստեղծագործական ճիգը, մշակը հայոց անդաստանին որ կողմն ալ որ վաստկի: Ուրիշ մտահոգութիւն եթէ չունիս, հիմնականի մասին խօսեցանք արդէն եւ համաձայն ենք լիովին: Այս հանդիպման մասին հաղորդէ Եդուարդին եւ Վահէին,- եւ ելաւ ոտքի:*

*- Մեկնելէ առաջ... ըսի՛ք՝ պիտի ընդլայնէք խմբագրական կազմը:*

*- Այո՛, այժմէն նկատի առ Տիգրան Ոսկունին:*

*- Չէ՞ք մտածեր նաեւ Պօղոսի մասին (հոս կարկամեցայ պահ մը):*

*- Անշուշտ, կը մտածեմ, եւ լա՛ւ կ՚ըլլայ, բայց... գիտես դժուարութիւնը:*

*Գլխարկը դրած էր գլխուն:*

*- Դուն, այս հանդիպման մասին իմացուր երկու համախոհներուդ: Ես ձեզ կը կանչեմ շուտով: Ց՛...*

*Ու գաւազանը նորէն սալարկին զարնելով հեռացաւ Սարերու Ասլանը:*

*Երեկոյեան հեռաձայնեցի թէ՛ Վահէին եւ թէ Եդուարդին: Ուրախացան երկուքն ալ. յայտնապէս բեռ մը ինկաւ երկուքին ալ ուսէն եւ իրենք զիրենք զգացին հարազատ հողի վրայ:*

*Իսկ Պօղո՞սը... գիրք մը հրատարակած էր՝ «Անդրշիրիմեան ձայներ»: Օրինակ մը բերաւ ինծի: Երկու օրուան մէջ կարդացի եւ խանդավառ գրախօսական մը գրելով՝ տարի «Ազդակ»ին:*

*Հ. Պալեան եւ Ա. Սահակեան իրարու աչքի նայեցան, մտածկոտ: Մ. Տէր Գալուստեան չմնաց, դուրը բացաւ գնաց:*

*- Վրադ վստահութիւն ունինք, Գեղա՛րդ, բայց այս պարագային զգուշ եղիր, զգուշ ըլլանք,- յորդորեց «Բանտի աշխարհէն» խուսափող հեղինակը: - Բայց տո՛ւր, այդ հատորը ես ալ կարդամ անգամ մը:*

*Գիրքը Ա. Սահակեանին եւ գրախօսականը Հ. Պալեանին տալով՝ մեկնեցայ գործիս:*

*Յաջորդ առաւօտ «Ուրֆայի Հերոսամարտ»ի դրօշակիրը հեռաձայնեց ինծի՝ շատ գոհ.*

*- Լաւ գիրք է, իրաւունք ունիս. հեռախօսեցի Օ. Մելիքսէթեանին («Համազգային»ի գրախանութին վարիչը այդ օրերուն), որ տասը օրինակ, իմ հաշուոյս, նուէր ղրկէ գաղափարական եւ դպրոցական գրադարաններու:*

*Իսկ գրախօսականս լոյս տեսաւ «Ազդակ»ի մէջ չորս օր շարունակաբար (1961, Մարտ 1-2-3-4):*

*Ես ալ ուրախ էի անշուշտ: Պօղոսը «շրջագիծ»ին մէջ բերելու ճամբան հարթուած էր, գոնէ մասամբ:*

*Պօղոս ինքն ալ յանկարծակիի եկած, բայց շնորհապարտ էր միանգամայն.*

*- Քիչ առաջ տոքթ. Ատուր Գապագեանին հանդիպած էի. «Հասակակիցդ արդարեւ ազնիւ վերաբերում ունեցած է քեզի հանդէպ»,- ըսաւ՝ ակնարկելով գրախօսականիդ:*

*- Պօղո՛ս, պատրաստուէ՛: Անպայման որ գրական նոր ձեռնարկ մը ոտքի պիտի հանենք: Եւ ամէն ճիգ պիտի թափենք, որ դուն մեզի հետ ըլլաս:*

Յ. ԳԵՂԱՐԴ

(Շար. 2)
(Փարիզ)






## ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐ՝ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

*Հայաստանի մէջ Իրանի դեսպանի յատուկ խորհրդական Թապաթապայինի վերջերս «Երեւան» պատկերասփիւռի ալիքով հայ հանրութեան առաջարկած է նկարներու, կարգախօսներու եւ արուեստի այլ արտայայտութիւններու միջոցով իրենց բողոքը արտայայտել Պաղեստինի մէջ տեղի ունեցող դէպքերուն դէմ:*

*Այս յայտարարութեան արձագանգած էին 200է աւելի մարդիկ, որոնց շարքին նաեւ երեխաներ, որոնք մասնակցեցան այս առիթով դեսպանատան մշակոյթի կեդրոնին մէջ 14 Մայիսին կազմակերպուած մրցանակաբաշխումին: Մրցանակներ շնորհուեցան 21 հոգիի:*

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՕԳՏՈՒՈՂՆԵՐՈՒ ԲԱՐՁՐ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

*«Հայ Ժողովրդական Ֆորում» հասարակական կազմակերպութիւնը Հայաստանի կառավարութեան եւ Համաշխարհային Դրամատան համագործակցութեամբ եւ «Հանրային ծառայութիւններու բարեփոխման» ծրագիրի շրջագիծին մէջ կատարած է ուսումնասիրութիւն մը:*

*Ուսումնասիրութեան մասնակիցներուն գերակշիռ մեծամասնութիւնը (96 առ հարիւր) վերջին 12 ամիսներուն ընթացքին չէ օգտուած դատական ծառայութիւններէն, այսինքն՝ չէ դիմած դատարան՝ իբրեւ մեղադրող կամ մեղադրուող կողմ: Ուսումնասիրութեան տուեալներով, միայն 4 առ հարիւրը դիմած է այդ ծառայութիւններուն. անոնց շարքին գերակշիռ է քաղաքաբնակներուն թիւը:*

*Դատարան դիմածներուն 56,7 առ հարիւրը ներկայացած է իբրեւ մեղադրող կողմ՝ քաղաքացիական գործով, 2,4 առ հարիւրը՝ քրէական գործով, իսկ 34,1 առ հարիւրը՝ իբրեւ մեղադրուող կողմ քաղաքացիական, իսկ 7,3 առ հարիւրը՝ քրէական գործերով:*

*Ուսումնասիրութեան մասնակցած են 1000 ընտանիք, 400 ձեռնարկութիւններ եւ անհատ ձեռներէցներ:*

## ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԱՐՀԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

*Ըստ Հայաստանի Ֆրանսական համալսարանի նախագահ, Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր Արթուր Բաղդասարեանի, ընթացքի մէջ են համալսարանին մէջ տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի մասնագէտներու պատրաստութեան շրջանային կեդրոնի ստեղծման աշխատանքները:*

*Ան նշած է, որ այդ աշխատանքներուն կը մասնակցին՝ Ֆրանսա, Գերմանիա, Սպանիա եւ ֆրանսական «Ալքաթէլ» մեծ ընկերութիւնը: Մասնակցութեան փափաք յայտնած է նաեւ գերմանական «Սիմընզ» ընկերութիւնը:*

*Ա. Բաղդասարեան հաւաստած է, որ կեդրոնը գործելու պիտի սկսի այս տարի, եւ ներկայիս կեդրոնի կառոյցին ստեղծման ուղղութեամբ կ՚աշխատին նաեւ ֆրանսացի եւ գերմանացի գիտնականներ:*

## ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ՝ ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

*Պատերազմին պատճառով Արցախի վնասուած դպրոցական շէնքերուն վերանորոգման եւ նորերու կառուցման, ինչպէս նաեւ ընդհանրապէս դպրոցաշինութեան ծրագիրներու իրականացման մասնակից պիտի դառնայ նաեւ ամերիկահայ գաղութը:*

*Այս նպատակով Միացեալ Նահանգներու «Ղարաբաղի Երեխաներ» բարեգործական հիմնադրամին հրաւէրով վերջերս Միացեալ Նահանգներ մեկնած էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան նախարար Համլէթ Գրիգորեան:*

*Ան հանդիպումներ ունեցած է Սան Ֆրանսիսքոյի Պըրքլիի համալսարանի հայ եւ ամերիկացի գիտնականներուն հետ, քննարկած է դպրոցաշինութեան, ինչպէս նաեւ կրթական տարբեր հարցեր:*

*Հ. Գրիգորեան հանդիպումներ ունեցած է նաեւ Լոս Անճելըսի հայ համայնքի ներկայացուցիչներու եւ յայտնի գործարարներու հետ: Ամերիկահայեր Արցախի դպրոցականներուն նուիրած են 30 համակարգիչ:*

## 3036 *ՅԱՆՑԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ՝ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐՈՒՆ*

*Այս տարուան առաջին երեք ամիսներուն Հայաստանի մէջ արձանագրուած է 3036 յանցագործութիւն:*

*Ըստ Հայաստանի վիճակագրական ծառայութեան տուեալներուն, վերոյիշեալ ժամանակաշրջանին արձանագրուած է դիտաւորեալ սպանութեան 17, սպանութեան փորձի՝ 6, մարմնական վնաս հասցնելու՝ 107, պետական կամ հանրային գոյքի յափշտակութեան՝ 196 դէպք:*

*Այս տարուան առաջին երեք ամիսներուն արձանագրուած է անձնական ունեցուածքի յափշտակութեան 951 դէպք, որմէ 760ը գողութեան, 136ը՝ խարդախութեան, 26ը՝ աւազակութեան միջոցով:*

## Հայկական Երաժշտութիւն, Աշխարհային Այլազանութիւն

«Ջուքասեան Արմինիրն Քանսըրթ Անսամպլ»ը Յունիս 2ին Ֆրեզնոյի մէջ յատուկ համերգով մը պիտի հրապարակէ հայկական դասական, ժողովրդային եւ աշուղական երգերու ու պարեղանակներու նուիրուած իր երրորդ ամփոփ սկաւառակը «Արձագանգներ» հայերէն վերնագիրով: «Տը Ֆրեզնօ Պի» թերթը սկաւառակին մասին տեղեկացնելով՝ կը գրէ, թէ անոր մէջ կը հնչեն ուտը, տուտուկը, տհոլը, քանոնը եւ սանթուրը: «Պայման չէ հայ ըլլալ՝ հայկական երաժշտութիւնը վայելելու համար», կ'ըսէ սկաւառակը ներկայացնող գրութիւնը: Թերթը կը թուէ նաեւ սկաւառակին ուշագրաւ բաժինները. ««Ազգ փառապանծ» երգը կ'ոգեկոչէ հայերուն տոկունութիւնն ու հայկական մշակոյթին աւելի քան 2500 տարուան գոյատեւումը: «Թամարա»ն արագ եւ կենսունակ ժողովրդային երգ մըն է: Համոյթին հիմնադիրը՝ աւագասրինգ (քլարինէթ) նուագող երաժիշտ Ճան Ջուքասեան յօրինած է «Սեբաստիոյ հալէ»ն՝ ի յիշատակ իր ծնողներուն, որոնք վերապրած են 1915ի Հայկական Ցեղասպանութենէն: Ան կը բացատրէ, թէ «Հալէ»ն սկիզբը տղամարդոց ռազմական պար մըն էր, որ հետագային եղափոխուելով վերածուած է տղամարդոց եւ կիներու ժողովրդային պարի»:

«Ջուքասեան Համոյթ»ը յաճախ ելոյթ կ'ունենայ Քալիֆորնիոյ տարածքին՝ կատարելով հայկական երգեր եւ երաժշտութիւն: Անցեալ Հոկտեմբերին անիկա համերգ մը տուաւ Լոս Անճելըսի Կէթի Կեդրոնին մէջ:

Աւելի կանուխ, 2001ի գարնան, Ֆրեզնոյի մէջ «Ջուքասեան Հայկական Համերգային Համոյթ»ին օրուան առիթով «Տը Ֆրեզնօ Ուիքլի» թերթը գրած է, որ թէեւ Միացեալ Նահանգներու երաժշտական պատկերը երեւութապէս «մռայլ» կրնայ ըլլալ, սակայն անոր մէջ կարելի է տեսնել «Ջուքասեան Համոյթ»ին նման «փայլող լոյսեր»:

# «ՔԻՉ ՄԸ ՈՒՏ, ՔԻՉ ՄԸ ՏՈՒՏՈՒԿ ԵՒ ՏՀՈԼ»

## «ՋՈՒՔԱՍԵԱՆ ՀԱՄՈՅԹԸ» ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳՆ ՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱՆՕԹԱՑՆԷ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԱՐԱԾՔԻՆ: ՖՐԵԶՆՈՅԻ ՄԷՋ ԵՐԿՈՒ ԹԵՐԹԵՐ Կ'ԱՐԺԵՒՈՐԵՆ ՁԱՅՆ

«Այսօրուան փոփ մշակոյթով յատկանշուած աշխարհին մէջ տաղանդն ու կարողութիւնը երկրորդական են եւ առեւտրականութիւնը բնական մէկ մասը կը կազմէ երաժըշտութեան, որ իր հերթին դարձած է ժամանցի ճարտարարուեստ մը, մինչդեռ ձայնասփիւռի եւ ձայնագրութեան գործիքին յայտնութենէն առաջ երաժշտութիւնը ժամանց չէր նկատուեր: Կար ժամանակ, երբ երաժշտութեան միջոցով դրամ շահելու համար հարկ էր զայն կիրարկել իբրեւ արուեստ», կը գրէ Քոլ Սմիթ «Տը Ֆրեզնօ Ուիքլի» թերթին մէջ՝ անմիջապէս մէջբերելով համոյթին հիմնադիրին բացատրութիւնը. «Ջուքասեան Համոյթը նուիրուած է հայկական երաժշտութիւնը հանրութեան ներկայացնելու եւ զայն պահպանելու ապագայ սերունդներուն համար: Անիկա առեւտրական նպատակներ չի հետապնդեր: Անշուշտ պիտի ուզէինք որոշ եկամուտ մը ապահովել, սակայն նիւթական շահը մեր գլխաւոր մեկնակէտը չէ»:

Քոլ Սմիթի համաձայն, «Ջուքասեան Համոյթ»ը «ճիշդ» ճամբուն վրայ կը գտնուի: 6 տարի առաջ իր հիմնադրութենէն ի վեր անիկա մեծ յաջողութիւն արձանագրած է Ֆրեզնոյի տարածքին: Հայկական երգերու եւ պարերու նուիրուած անոր առաջին սկաւառակէն վաճառուած է աւելի քան 6 հազար օրինակ: Յաջորդ սկաւառակը՝ «Աւանդական» հայերէն վերնագիրով հրապարակուեցաւ անցեալ տարի, երբ Ֆրեզնոյի մէջ Մարտ 30ը հռչակուեցաւ «Ջուքասեան Հայկական Համերգային Համոյթի օր» եւ խումբը պետական մակարդակի հրաւէրով համերգ մը տուաւ:

«Ջուքասեան Համոյթ»ին մաս կազմող իւրաքանչիւր երաժիշտ վկայուած է Ամերիկայի կամ Հայաստանի երաժշտանոցներէն: Համոյթը միակ խումբն է Միացեալ Նահանգներու մէջ, որ կը նուագէ հայկական արեւմտեան եւ արեւելեան աւանդական երաժշտութիւն:

«Եթէ ծանօթ չէք հայկական երաժշտութեան, ժամանակն է, որ առիթ ստեղծէք եւ լսէք աշխարհի ամէնէն իւրայատուկ եւ հրաշալի երաժշտական աւանդութիւններէն մէկը, - կը գրէ «Տը Ֆրեզնօ Ուիքլի»:- Հայկական երաժշտութիւնը գոյութիւն ունի հազարամեակներէ ի վեր: Հայկական երաժշտական գործիքները գլխաւորաբար հիմնուած են միջին արեւելեան տարբերակներու վրայ, սակայն յաճախ բարեփոխուած են հայկական եղանակներու յարմարելու համար: Հայկական եղանակները իւրայատուկ են իրենց աշխարհագրական շրջանին մէջ: Այսուհանդերձ զանոնք կարելի է դիւրութեամբ փոխադրել յունական երաժշտութեան եւ հիւսիսային Հնդկաստանի ռականերուն պարունակին մէջ: Թէեւ հայկական երաժշտութեան մէջ օգտագործուած գործիքները կը յիշեցնեն իրանեան կամ թրքական եղանակներու ոճը, սակայն հայ երաժիշտներ կ'արտաբերեն շատ աւելի արեւմտեան հնչեղութիւն մը: Հայկական երգերը շատ մօտ են արեւմտեան երաժշտութեան աւանդութեան եւ բազմաթիւ երաժշտագէտներ կը շեշտեն, թէ արեւմտեան երգեցողութեան ոճերը ծնունդ առած են Հայաստանի մէջ: Հայաստանի աշխարհագրական դիրքը բաւարար է պատկերացնելու համար, թէ երաժշտական տարբեր ոճեր ի՛նչպէս իւրայատուկ կերպով ներդաշնակուած են հայկական երաժշտութեան մէջ»:

«Միացեալ Նահանգներու մէջ կայ հայերու երկու կամ երեք սերունդ, որոնք չեն լսած հայկական աւանդական երաժշտութիւն: Եթէ այսպէս շարունակուի, ապա երաժշտական մեր դարաւոր գանձերը ի սպառ պիտի կորսուին», կ'ըսէ Ջուքասեան:

Ջուքասեանի ճիգերը ոչ միայն ճանաչում գտած են, այլ նաեւ անոր համոյթը սփիւռքեան այն սակաւաթիւ մշակութային խումբերէն է, որ Հայաստանի եւ Արցախի մէջ մէկ ամիս հայկական համերգներու շարք մը տուած է Նախագահ Ռոպէրթ Քոչարեանի հրաւէրով: 1999ին տեղի ունեցած այս համերգներուն առիթով Հայաստանի մշակոյթի նախարար Ռոլանտ Շառոյեան յայտարարած է. «Ջուքասեան Համոյթին երաժիշտներն ու երգիչները բարձր մակարդակի արհեստավարժներ են: Անոնք վարպետօրէն կը նուագեն Հայաստանի մէջ աւանդաբար նուագուած հնադարեան գործիքները»: Հայաստանի մէջ համոյթին վերջին համերգին ներկայ եղած են աւելի քան 3000 հանդիսատեսներ: Հայաստանի պետութիւնը համոյթը պարգեւատրած է Հայաստանի Ազգային ոսկեայ շքանշանով, հայկական երաժշտութեան անոր նուիրուածութեան եւ զայն պահպանելու աշխատանքին համար: Միացեալ Նահանգներու մէջ համոյթը միակն է, որ արժանացած է այս պատիւին: Անցեալ տարի «Ջուքասեան Համոյթ»ը դարձեալ հրաւիրուեցաւ Հայաստան՝ մասնակցելու համար Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումին 1700ամեակի հանդիսութիւններուն:

# ՄԵՏԱՔՍԻ ՃԱՄԲՈՒՆ ՁԱՅՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԸ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՍԻԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՄԻԱՆԱՆ ԵՕ-ԵՕ ՄԱՅԻ ՄԵԿ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԷՋ: ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՏՈՒԿԸ ՄԱՍ ԿԸ ԿԱԶՄԷՐ ԱՆՑԵԱԼ ԱՊՐԻԼԻՆ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ ԱՆՈՐ ՀԱՄԵՐԳԱՇԱՐԻՆ: «*ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՕ ՔՐՈՆԻՔԸԼ*» ԿԸ ԳՐԷ.

Մարդկութիւնը իր գոյութեան սկիզբէն ի վեր լարեր կը թրթռացնէ, փողեր կը հնչեցնէ եւ իր հասողութեան սահմաններուն մէջ որեւէ բանի կը զարնէ գեղեցիկ ձայներ արտաբերելու ճիգով: Աւագասրինգը, կիթառը, շեփորը եւ թմբուկը, որոնց ծանօթ են արեւմուտքցի ունկնդիրները, պարզապէս մէկ փոքր բաժինը կը կազմեն այն գործիքներուն, զորս երաժիշտներ յայտնագործած են հազարամեակներու ընթացքին:

Սակայն թաւջութակահար Եօ- Եօ Մա եւրոպական եւ ասիական երաժշտական աւանդութիւններու ընդարձակ պեղում մը կը կատարէ Պըրքլիի մէջ՝ իրագործելով իր «Մետաքսի ճամբուն ծրագիրը»: Անոր համերգաշարին ամէնէն հետաքրքրական երեւոյթներէն մէկն է ներկայութիւնը աւելի քան երկվեցեակ երաժշտական գործիքներու, որոնք հազուադէպօրէն հնչած են արեւմտեան համերգասրահներու մէջ:

Ստորեւ կարգ մը գործիքներ, որոնք մաս կը կազմեն անոր համերգաշարին:

Թապլա. փոքր ձայնով այս գործիքը կու գայ Հնդկաստանէն: Եօ- Եօ Մայի համերգաշարին բացումին օրը անիկա կը հնչէ «Մարք Մորիս պարախումբ»ին հետ: Եօ-Եօ Մա թապլայի վարպետ Զաքիր Հիւսէյնի հետ կը նուագէ անոր յօրինած «Քոլամ» կտորը: Թապլան գոյութիւն ունի առնուազն 18րդ դարէն ի վեր: Անիկա կը բաղկանայ այծի մորթով պատուած մետաղէ երկու թմբուկներէ: Երբ նուագողը մատներուն ծայրով կը զարնէ մորթին, կ'արտաբերէ պայծառ եւ հնչեղ ձայն մը, զոր արագացնելով կարելի է գինուորական տողանցքի մը կշռոյթը ստեղծել: Այս գործիքը նաեւ կարելի է նուագել ափով՝ ձայնի հնչեղութեան աւելի խոնաւ յատկանիշ մը տալու, ձայնաստիճանը փոխելու եւ նուագուած խազերը վայելչութեամբ օժտելու համար: Վարպետ նուագող մը այս թեքնիքները միաձուլելով կրնայ հմայել ունկնդիրը:

Մորին խուուր. մոնկոլական այս գործիքին անունը կը նշանակէ «ձիու ջութակ»: Նուագողին վիզին մօտ լարերը ամրացնող գամերը զետեղուած են ձիու գլուխի նման տաշուած տուփիկի մը վրայ: Ջութակին մարմինը քառակուսի է. անիկա աւանդաբար կը շինուէր ձիու մորթէ, սակայն ներկայիս փայտ կը գործածուի: Ջութակին երկու լարերը եւ աղեղը շինուած են ձիու բաշէ: Նուագողը գործիքը կը բռնէ թաւջութակի պէս, սակայն անոր մարմինը կը նստի գիրկը եւ ոչ թէ կը յենի գետնին: Ձայնը նման է արդի թաւջութակին:

Շենկ. չըթներով նուագուող երգեհոն մը հիւսիսային եւ արեւելեան Չինաստանէն: Այս գործիքը յիշատակուած է Ն. Ք. 14րդ եւ 12րդ դարերու չինական արձանագրութիւններու մէջ: Կը բաղկանայ փչողական մասէ մը, որ կապուած է մետաղէ կամ եղէգէ շինուած եւ տարբեր չափի աւելի քան 17 փողերու՝ համաչափ շարուածքով: Շէնկը արեւմտեան հարմոնիքային պէս կը նուագուի ներշնչելով եւ արտաշնչելով: Սակայն նուագողը նաեւ իր մատները կը գործածէ որոշ փողեր լռեցնելու համար: Շէնկի ձայնը եւս նման է հարմոնիքային, թէեւ աւելի պայծառ է եւ մետաղային:

Փիփա. փայտէ չինական այս քնարը նուագելու նախապայմաններէն մէկը տաղանդն է: Անոր 4 լարերը հարկ է թրթռացնել աջ ձեռքին մատներուն թաւալող շարժումներով, գլխապտոյտ պատճառող արագութեամբ:

Քայակում. փայտէ այս երկար սիթարը կու գայ Քորէայէն եւ բաղկացած է շարժական 12 «կամուրջներու» վրայ երկարող 12 լարերէ: Ձայն կը նուագեն գետինը նստած. գործիքը կը յենի նուագողին գիրկին ու գետնին: «Կամուրջներուն» մօտիկ լարերուն վրայ ճնշելով նուագողը կ'արտաբերէ քորէական դասական ոճին յատուկ հանգուցուած եւ զարդարուն ձայներ:

Քամանչա. բարակ ու երկար այս ջութակը 12րդ դարէն ի վեր ընդհանրացած է Իրանի, Թուրքիոյ, Ազրպէյճանի եւ Հայաստանի մէջ: Իրանցի յօրինող Քայհան Քալհոր կը նուագէ այս առիթով իրմէ ապսպրուած «Պլու էզ տը թըրքուազ նայթ աֆ Նէյշապուր» գործը: Գործիքը ունի փայտէ կլոր փոքր մարմին մը, որ միացած է երկար տախտակի մը: Անոր երաժըշտութիւն արտաբերող բաժինը աւանդաբար շինուած կ'ըլլայ անասուններու մաշկէ կամ ձուկի մորթէ: 4 լարերը կը նուագուին աղեղով: Քամանչային ձայնը խոյացող է, ջերմ եւ յաճախ երգեցիկ:

Սանթուր. Իրանեան սանթուրը մուրճերով նուագուող արուրաքնար մըն է (տալսիմըր): Ունի ընկոյզի փայտէ շինուած տրապիզաձեւ պատեան մը եւ 72 լարեր՝ բաժնուած 3 կամ 4 խումբերու: Նուագողը թաղիքով պատուած երկու մուրճերով կը զարնէ լարերուն՝ արտաբերելով պայծառ, զրնգուն եւ շատ արագ սլացող երաժշտութիւն մը:

Տուտուկ. հայկական այս փչողական գործիքը կը նմանի արեւմտեան աւագասրինգին: Կը բաղկանայ փայտէ երկար փողէ մը, որ կապուած է զոյգ եղէգներու (սովորաբար չաքարեղէգ): Ձայն կը նուագեն ծածկելով եւ բանալով կողմի ծակտիկները: Սակայն այս գործիքին ձայնը իւրայատուկ է եւ անմոռանալի. ճառագայթող եւ թաւշային ձայն մը՝ ընդարձակ տարողութեամբ եւ յատկանշական հնչեղութեամբ:

Նայ. հնդկական եղէգով շինուած իրանեան այս սրինգին տարբերակները կ'ընդգրկեն ծայրամասին կամ կողմէն փչուող գործիքներ:

Շար.ը՝ էջ 8

# «ՈՉ ՄԷԿ ՀԱՐՑՈՒՄ, ՄԻԱՅՆ ՆՈՒԱԳԷ»

## ԻՏԱԼԱՑԻ ԵՐԱԺԻՇՏ ԼՈՒՉԻԱՆՕ ՊԵՐԻՕ ԿԸ ԴԻՄԷ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՋՈՒԹԱԿԱՀԱՐ ՔԻՄ ՔԱՇՔԱՇԵԱՆԻ՝ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ ԿԵԱՆՔԻ ԿՈՉԵԼՈՒ ՀԱՄԱՐ: «*ԻՆՏԻՓԵՆՏԸՆԹ*»Ի ԱՇԽԱՏԱԿԻՑ ՄԱՅՔԸԼ ՉԸՐՉ ԱՅՍ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՎ՝ ԿԸ ԿԵԴՐՈՆԱՆԱՅ ՔԱՇՔԱՇԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Իտալացի վեթերան երաժիշտ Լուչիանօ Պերիօյի նորագոյն ձայնագրութիւնը կը հաստատէ անոր այն համոզումը, թէ արեւմտեան երաժշտութեան վերընձիւղումը դասական սպառած ոճերէն անդին պէտք է փնտռել:



Քիմ Քաշքաշեան վերջին տարիներուն նուագած է աշխարհահռչակ նուագախումբերու եւ Ռիքարտօ Մութիի նման անուանի խմբավարներու հետ, Նիւ Եորքի, Պերլինի, Վիեննայի, Լոնտոնի, Միլանոյի, Միւնիխի եւ Թոքիոյի մէջ:

Լուչիանօ Պերիօյի նոր սկաւառակը կը պարունակէ սիկիլիական 5 ժողովրդական երգեր՝ տեղադրուած սենեկային երաժշտութեան երկու կտորներու՝ «Վոսի»ի եւ «Նաթուրալէ»ի միջեւ: Պերիօ կրնայ գերարդիապաշտ մը ըլլալ, սակայն ան հասակ նետած է իտալական ժողովրդական երգերու աւանդութեան մէջ, որ անոր սենեկային երաժշտութեան գործերուն ներշնչումի աղբիւրն է: Մշակութային այս իրագործումին մէջ Պերիօյի մենակատարը ամերիկահայ ջութակահար Քիմ Քաշքաշեանն է, որ անոր երաժշտութիւնը նուագելէ առաջ դիմած է «մեծ քուրմին» կարծիքին: «Պերիօյի հանդիպեցայ Ֆլորանսի մէջ եւ ըսի, թէ քանի մը հարցում ունէի: Հետեւաբար ջութակս տարի ձայնագրութեան վայրը, եւ ան թեւերը սոթտեց ու ըսաւ. «Ոչ մէկ հարցում, միայն նուագէ»: Ան երբեմն շարժուձեւերով կ'արտայայտէր իր համաձայնութիւնը կամ անհամաձայնութիւնը, մինչեւ որ յստակացաւ, թէ ի՛նչպէս պէտք էր նուագէի»: Իսկ ի՞նչ պէտք էր ընէր Քաշքաշեան. «Հեռանալ դասական աւանդական ոճէն: Ան կ'ուզէր, որ ժողովրդային երգերու մեկնաբանի մը պէս նուագէի: Ան ամէն ինչ կը բացատրէր երգի ճամբով, զոր կը համարէր մեր լաւագոյն գործիքը», կ'ըսէ ան:

Պերիօյի սենեկային երաժշտութեան գործերը որոշ չափով կը բեկանեն անոր միւս երգերուն ժողովրդական յատկանիշները: Սակայն Քաշքաշեանի պարտականութիւնը եղած է ճանչնալ այն պայմանները, որոնց մէջ ծնունդ առած են այս կոպիտ կերպով տաշուած գոհարները: «Եթէ «Նիննա նաննա» երգը ունկնդրենք պարզապէս իբրեւ օրօր, այլ բան է, սակայն երբ մէկը ըսէ, թէ երգը կը պատկանի մօր մը, որ կ'երգէ. «Տէր Աստուած, հաճիս առ զաւակս, որովհետեւ զայն կերակրելու միջոց չունիմ», ապա ասիկա բոլորովին տարբեր բան է»: Քաշքաշեան համոզուած է, որ այս մօտեցումը ուղղակիօրէն կը հակադրըւի դասական երաժիշտի մը նպատակին: Ան կ'ըսէ. «Սովորաբար կ'ուզենք, որ երաժշտութիւնը ցայտուն կերպով արտայայտէ ինքզինք, եւ երգի մը պատգամը բառերով լսելի դարձընելը անհրաժեշտութիւն չենք նկատեր»:

«Ի. Սի. ԷՄ.» ընկերութեան կողմէ Լուչիանօ Պերիօյի ստեղծագործութիւններուն ձայնագրութենէն ետք պիտի հրապարակուի Քաշքաշեանի երկրորդ ձայնագրութիւնը, որ պիտի ընդգրկէ հայազգի երաժիշտ Տիգրան Մանսուրեանի արդիապաշտ եւ հայկական ժողովրդային երաժըշտութեան վրայ հիմնուած ստեղծագործութիւնները: Այս սկաւառակը եւս պիտի պարունակէ երաժշտական «անտաշ» տարրեր, ինչպէս՝ ժողովրդական յանպատրաստից երգեր, զորս «Ի. Սի. ԷՄ.» ընկերութեան պատասխանատուներէն Մանֆրէտ Այխըր համոզած է Մանսուրեանի երգել ձայնագրութեան սենեակի մը մէջ:

Առաջին ակնարկով կը թուի, թէ Քիմ Քաշքաշեան ամերիկացի մըն է: Սակայն անոր կեցուածքն ու շնորհալի տաղանդը աւելի տարաշխարհիկ արմատներու մասին մտածել կու տան: Որքա՞ն հայ է ան: «Լաւ հարցում մըն է,- կ'ըսէ Քաշքաշեան,- թուղթի վրայ եւ արիւնով՝ 100 առ հարիւր համեմատութեամբ: Հայրս փոքրիկ մանչուկ մըն էր, երբ Միացեալ Նահանգներ հասած է: Մայրս թէեւ Ամերիկա ծնած է, սակայն մէկ բառ անգլերէն չէ լսած մինչեւ 6 տարեկանին դպրոց երթալը: Ծնած եմ Տիթրոյիթ, սակայն խորապէս կապուած եմ հայ ժողովուրդին եւ ինքնին հայոց երկրին հետ»:

Իսկ հայկական արմատները ի՞նչ դրոշմ ձգած են անոր երաժշտութեան վրայ: «Շատ մեծ,- կ'ըսէ Քաշքաշեան:- Հայրս տեւաբար կ'երգէր եւ հասակ նետած եմ անոր երգերուն հետ: Ամէն Կիրակի կ'այցելէինք մեծ մօրս եւ Մէրի հօրաքրոջս: Անոնք կ'երգէին եւ մեծ մայրս կը պարէր»: Քաշքաշեանի ընտանիքը որեւէ ձեւով մօտ չէր հայկական եկեղեցիին, սակայն հայկական եկեղեցական երաժշտութիւնը սերտօրէն մաս կը կազմէ անոր հայկական ինքնութեան: «Հայերէն լեզուն, հայկական երգերը, եղանակները, այս բոլորը կը պատկանին իմ էութեանս: Եւ այս բոլորը մէջս դրոշմուած են ներհուն մելամաղձոտութեամբ մը», կ'ըսէ ան:

Այո՛, կարելի է պատկերացնել ասիկա, նկատի ունենալով, որ հայերը 1920ական տարիներուն տոկացած են այնքան արիւնոտ հալածանքի մը, որ շատեր չեն յանդգնած մնալ իրենց երկրին մէջ եւ խոյս տուած են դէպի աքսոր: Քաշքաշեան կ'ըսէ. «Նոյնիսկ մեր ուրախ երգերուն մէջ տխրութիւն կայ»:

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ




Յ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՄ

## ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Ազգ. Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ. ԼԵՎԱՄի յանձնախումբին կողմէ կազմակերպուած պասքեթպոլի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ.

**ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆ**

*ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՅԻՍ*
*Միջակ աղջիկներ. Ս. Խանամիրեան - Սոֆիա Յակոբեան 12:00*
*Միջակ աղջիկներ. Մեսրոպեան - Ճեմարան 2:00*
*Միջակ տղաք. Ս. Հռիփսիմեանց - Թորոսեան 3:00*
*Մեծ աղջիկներ. Ս. Հռիփսիմեանց - Կ. Բ. Վ. 4:00*
*Մեծ տղաք. Ս. Հռիփսիմեանց - Կ. Բ. Վ. 5:00*

## ՎԱԼԵՐԻ ԼՈՊԱՆՈՎՍՔԻ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՒ ՀՈՂԻՆ


Լոպանովսքի

Հակարաւոր ուքրանացիներ, որոնց կարգին երկրին նախագահը՝ Լէոնիտ Քուչմա, երէկ իրենց վերջին հրաժեշտը տուին ուքրանացի մարզիչ Վալերի Լոպանովսքիի, որուն մարմինը յանձնուեցաւ հողին: Ան շաբաթասկիզբին մահացաւ, ուղեղի վիրաբուժութեան ենթարկուելէ երկու օր ետք: Լոպանովսքի, որ 63 տարեկան էր, իր սերունդի ամէնէն յաջող մարզիչներէն մէկն էր:

Լոպանովսքի, որուն առողջական վիճակը այդքան ալ լաւ չէր, անցեալ Երեքշաբթի օր փոխադրուած էր Զափորիժիայի մէկ հիւանդանոցը Տինամօ Քիեւ-Մեթալուրկ Զափորիժիա մրցումին ընթացքին շատ գէշ վիճակի մէջ ըլլալէ ետք: Հակառակ անոր, որ վիրաբուժութենէն ետք բժիշկներ յայտնած էին ըսելով, որ անոր վիճակը բարելաւումի ընթացքի մէջ է, սակայն այդ մէկը տեւած էր շատ կարճ:

Քիեւի մէջ ծնած Լոպանովսքի, նախկին Խորհրդային Միութեան ախոյեանութեան մրցումներուն ընթացքին դաշտ ներկայացած է 253 անգամ, նշանակելով 71 կոլ: Ան երկու անգամ կրած է նախկին Խորհրդային Միութեան ֆութպոլի ազգային խումբին շապիկը:

Ուքրանական շատ մը ակումբներու մարզիչը ըլլալէ բացի, ան եղած է նաեւ նախկին Խորհրդային Միութեան, Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Քուէյթի եւ Ուքրանիոյ ֆութպոլի ազգային խումբերուն մարզիչն ալ:

## ԱՐԺԱՆԹԻՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԺԱՄԱՆԵՑ ՃԱՓՈՆ

Քոսթա Ռիքայէն ետք, Արժանթինի ֆութպոլի ազգային խումբը հանդիսացաւ երկրորդ խումբը, որ երէկ ժամանեց Ճափոն: Երկուշաբթի, 13 Մայիսին Քոսթա Ռիքա ժամանած էր Ճափոնի օդակայանը:

Տարբեր էր սակայն Արժանթինի ֆութպոլի ազգային խումբին ժամանումին, որ ապահովութեան խիստ հսկողութեան տակ դուրս եկաւ օդակայանին յատուկ մէկ ելքէն եւ *օթոպիւսներով* (ոստիկաններու հսկողութեան տակ) ուղղակիօրէն մեկնեցաւ Ֆուքուշիմայի մէջ իր գտնուող բանակավայրը (Թոքիոյէն 200 քմ. հիւսիս):

Կ'ակնկալուի, որ այսօր Ճափոն ժամանեն նաեւ Սէուտական Արաբիա եւ Սենեկալ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՄ)

ՋՐՈՅՑ

ՆԻՒԹ՝
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ ԵՒ
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝
ՅԱԿՈԲ ՀԱՒԱԹԵԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 18 Մայիս 2002, երեկոյեան ժամը 6:30ին, ՀԵՀՈՄի կեդրոնատեղիին մէջ, մայրավանք, Անթիլիաս:

Հրաւէր

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

## - ԱՅՍՕՐ՝ Շ. ՍԱՀԷԼ - Հ. Մ. Ը. Մ. - ՍԱԺԷՍ - ՆԸԺՄԷ ՄՐՑՈՒՄԸ՝ ԿԻՐԱԿԻ ՕՐ

*Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը իր ժողովին վաւերացնելէ ետք 25րդ եւ նախավերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները, կարգ մը փոփոխութիւններու ենթարկեց 26րդ եւ վերջին հանգրուանի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան շաբաթավերջին, հետեւեալ յայտագիրին հիմամբ.*

**●ԱՅՍՕՐ**
Շապապ Սահէլ – Հ. Մ. Ը. Մ. 4:45ին Պէյրութ
Սաֆա – Ահլի Սայտա 4:45ին Պ. Համուտ
**●ՎԱՂԸ**
Ռասինկ – Ահտ 4:45ին Ժունիէ
Ախա Ալէյ – Անսար 4:45ին Պ. Համուտ
Թ. Սուր – Հ. Մ. Մ. 4:45ին Պէյրութ
Սալամ – Պըրժ 4:45ին Թրիփոլի
**●ԿԻՐԱԿԻ, 19 ՄԱՅԻՍ**
Սաժէս – Նըժմէ 8:30ին Մ. Աւան

*Ինչպէս նկատելի է, 2001–2002 եղանակի ախոյեանութեան փակման մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 19 Մայիսին, Մարզական Աւանի դաշտին վրայ, երեկոյեան ժամը 8:30ին Նըժմէի եւ Սաժէսի միջեւ:*

*Նըժմէ, որ այժմ մէկ կէտի առաւելութիւն մը ունի երկրորդ դիրքը գրաւող Սաժէսի վրայ, պէտք ունի միայն հաւասարութեան մը, հանդիսանալու համար ախոյեան: Տարբեր է պարագան սակայն Սաժէսի, որ յաղթանակէ այլ ընտրանք չունի:*

*26րդ հանգրուանի բացման մրցումներուն, այսօր Հ. Մ. Ը. Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական կազմը իր վերջին մրցումը կը կատարէ Ա. դասակարգին մէջ, ճակատելով Շապապ Սահէլի դէմ:*

*Վաղը տեղի ունենալիք չորս մրցումներէն երեքը պիտի ըլլան բաւական հետաքրքրական եւ տաք ճակատումներ, նկատի ունենալով, որ անոնց արդիւնքներուն լոյսին տակ պիտի յստականայ Բ. դասակարգ փոխադրուող չորրորդ եւ վերջին խումբին անունը:*

*Ախա Ահլի Ալէյ, Անսարի դէմ իր մրցումին հաւասարութիւն մը արձանագրելու պարագային պիտի մնայ Ա. դասակարգ: Ահտ, Ռասինկի դէմ յաղթանակ մը արձանագրելու պարագային պատճառ պիտի դառնայ, որ Հ. Մ. Մ. ըլլայ Բ. դասակարգ իջնող չորրորդ խումբը, ինչ ալ որ ըլլայ Թատամոն Սուրի դէմ անոր կատարելիք մրցումին արդիւնքը:*

*Ֆետերասիոնին այս ժողովին, կախակայուած մարզիկներուն թիւն էր հինգ, որոնք իրենց երրորդ դեղին քարտը ստանալով (25րդ հանգրուանի մրցումներուն), պիտի բացակային շաբաթավերջի մրցումներէն: Անոնք են. Մարիոս Պեթէք (Սաֆա), Լեւոն Խաչատուրեան (Հ. Մ. Ը. Մ.), Մոհամէտ Մըշլէպ Մաթար (Անսար), Ատնան Մոհամէտ Հասապ (Շապապ Սահէլ) եւ Քարիմ Քընֆանի (Սաժէս): Իսկ Պասէլ Թալէպ (Սաֆա) իր կոշտ խաղարկութեան պատճառով երկու մրցումով կը կախակայուի:*



Չորեքշաբթի, 15 Մայիսին, Ռէալ Մատրիտ, 2–1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պայէր Լեւերքուզընը, յաջողեցաւ իր իսկ հաստատած մրցանիշը աւելիով բարելաւել, իններորդ անգամ բաժակը բարձրացնելէ ետք:

Մինչ դաշտին մէջ, Ռէալ Մատրիտի մարզիկները տօնախմբութեան մէջ էին, անդին դաշտէն դուրս, մինչ խումբին համակիրները որոնք կը տօնէին իրենց կազմին արձանագրած այս յաղթանակը, միեւնոյն ժամանակ ալ բախում ունենալով ոստիկանութեան հետ:

Ըստ տեղական մամուլին, շուրջ 104 անձեր վիրաւորուեցան, որոնց կարգին՝ 22 ոստիկաններ, մինչ 24 անձեր փոխադրուեցան հիւանդանոց: Ոստիկանութիւնը յայտնեց, թէ շուրջ ութ համակիրներ ձերբակալուեցան:

ՏՈՒՊԱՅԻ ՄԷՋ

## ՏԷՅՎԻՏ ՊԵՔՀԱՄ ՎԵՐՍԿՍԱՒ ԻՐ ՓՈՐՁԵՐՈՒՆ

Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբին խմբապետ Տէյվիտ Պեքհամ, հինգ շաբթուան բացակայութենէ մը ետք, դարձեալ երեւցաւ ֆութպոլի կանաչ դաշտերուն վրայ, երբ ան իր խմբակիցներուն հետ փորձեր կատարեց Տուպայի մէջ, ուր կը գտնուի Անգլիոյ ֆութպոլի ազգային խումբը, բանակավայրի մը համար:

Անգլիոյ մարզիկները մինչեւ վաղը՝ Շաբաթ արձակուրդի մէջ պիտի ըլլան իրենց ընտանիքներուն հետ, ապա պիտի մեկնին Հարաւային Քորէա, ուր ֆութպոլի բարեկամական մրցում մը պիտի կատարեն անոր դէմ: Այս մրցումէն ետք, Անգլիա պիտի կատարէ բարեկամական իր վերջին մրցումը՝ Քամերունի դէմ (Մայիս 26ին): Ապա պիտի կատարէ 2002ի Մոնտիալի իր առաջին մրցումը՝ Շուէտի դէմ (2 Յունիսին):

●ԳԵՐՄԱՆԻՈՅ ֆութպոլի ֆետերասիոնը երէկ յայտնեց, թէ գերմանացի միջազգային յետսապահ Քրիսթիան Վէօրնզ (Պորուսիա Տորթմունտ), 2002ի Մոնտիալին իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել, վիրաւոր ըլլալով:

Գերմանիոյ ֆութպոլի ազգային խումբին մարզիչ Ռուտի Վէօլըր յայտնեց, թէ 30 տարեկան Վէօրնզ ճզմուած ժամանակին ապաքինած չըլլալով, դուրս կը մնայ կազմէն: Վերտըր Պրեմընի մարզիկ Ֆրանք Պաուման պիտի ըլլայ Վէօրնզը փոխարինողը, որ Ենս Նովոթնիէն ետք (Պայէր Լեւերքուզըն) կը դառնայ երկրորդ մարզիկը, որ դուրս կը մնայ կազմէն (դարձեալ վիրաւոր):

Գերմանիոյ ֆութպոլի ազգային խումբը, նախքան Ճափոն մեկնիլը, վաղը՝ Շաբաթ կը կատարէ իր վերջին բարեկամական մրցումը՝ Աւստրիոյ դէմ, Լեւերքուզընի մէջ:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՆԻՒ ՃԸՐԶԻ ՆԷԹՑ ՅԱՍԱՒ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Էն. Պի. Էյ.ի *փլէյօֆի* կիսաւարտական հանգրուանի չորրորդ եւ վերջին ճակատումին, որ տեղի ունեցաւ Նիւ Ճըրզի Նէթցի եւ Շարլոթ Հոռնէթցի միջեւ (Արեւելեան շրջան), յստակացաւ վերջին խումբը, որ ապահովեց աւարտական մրցումին իր տոմսը: Նէթց 103–95 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Հոռնէթցը, ապահովեց իր տոմսը, 4–1 արդիւնքով վերջնական յաղթանակը ապահովելով:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Նէթց այսպիսով առաջին անգամ ըլլալով հասաւ աւարտականին, Էն. Պի. Էյ.ի միանալէն ետք (1976):

Նէթցի արձանագրած այս յաղթանակին մէջ իր կարեւոր բաժինը ունեցաւ Ճէյսըն Քիտ, որ նշանակեց 23 կէտ, 13 *էսիսթ* եւ 7 *ռիպաունտ*: Անոր խմբակից Քերի Քիթըլզ նշանակեց 18 կէտ:

Աւարտականին Նէթց կը ճակատի Լոս Անճելըս Լէյքըրսի դէմ:

Նշենք, թէ աւարտական հանգրուան հասնող չորս խումբերն ալ 4–1 արդիւնքով պարտութեան մատնեցին իրենց մրցակիցները:

ՖԻՖԱՅԻ ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

## 2002Ի ՄՈՆՏԻԱԼԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԽՈՒՄԲԵՐԸ՝ ԱՌԱՋԻՆ 50ԻՆ ՄԷՋ

*ՖԻՖԱն հրապարակեց այս ամսուան ֆութպոլի ազգային խումբերուն ընդհանուր դասաւորումը, որ այսպիսով կ'ըլլայ վերջինը՝ 2002ի Մոնտիալէն առաջ, որ կը սկսի յառաջիկայ 31 Մայիսին:*

*Պարագլուխի դիրքին վրայ բազմած կը մնայ Ֆրանսա, որ ունի 802 կէտ: 2րդ դիրքը կը գրաւեն Պրազիլ եւ Արժանթին, որոնք ունին 784ական կէտ: Անցեալ ամիս Արժանթին կը գրաւէր 3րդ դիրքը:*

*Առաջին տասը դիրքերը գրաւող խումբերէն երեքը՝ Քոլոմպիա, Հոլանտա եւ Եուկոսլաւիա իրենց մասնակցութիւնը պիտի չբերեն Մոնտիալին: Իսկ 32 խումբերէն ամէնէն աւելի վար դասուած խումբն է Չինաստան, որ կը գրաւէ 50րդ դիրքը: Նշենք, սակայն, որ Չինաստան առաջին անգամ ըլլալով է, որ կը մասնակցի Մոնտիալին:*

*Լիբանանի ֆութպոլի ազգային խումբը մնաց նոյն դիրքին վրայ (94րդ), մինչ Սուրիա չորս դիրք նահանջելով այժմ Լիբանանէն մէկ դիրք աւելի վեր է: Իր կարգին նահանջեց Հայաստան. այժմ՝ 101րդ:*

*Ստորեւ՝ առաջին դիրքերը գրաւող խումբերուն, ինչպէս նաեւ կարեւորագոյն խումբերուն եւ 2002ի Մոնտիալին իրենց մասնակցութիւնը բերող խումբերուն դասաւորումը (փակագիծին մէջ նշուած է անոնց անցեալ ամսուան դասաւորումը).*

| | ԿԷՏ |
|---|---|
| 1.– Ֆրանսա (առաջին) | 802 |
| 2.– Պրազիլ (2րդ) | 784 |
| 2.– Արժանթին (3րդ) | 784 |
| 4.– Քոլոմպիա (4րդ) | 728 |
| 5.– Փորթուգալ (5րդ) | 726 |
| 6.– Իտալիա (6րդ) | 717 |
| 7.– Մեքսիքա (7րդ) | 674 |
| 17.– Քամերուն (18րդ) | 672 |
| 18.– Փարակուէյ (14րդ) | 671 |
| 19.– Շուէտ (17րդ) | 665 |
| 20.– Դանիա (20րդ) | 657 |
| 21.– Խրուաթիա (23րդ) | 655 |
| 22.– Թուրքիա (24րդ) | 654 |
| 23.– Պելճիքա (22րդ) | 653 |
| 24.– Ուրուկուէյ (20րդ) | 652 |
| 25.– Սլովենիա (28րդ) | 649 |
| .................................... | |
| 27.– Նիկերիա (29րդ) | 644 |
| 28.– Ռուսիա (24րդ) | 644 |
| 29.– Քոսթա Ռիքա (27րդ) | 643 |
| 30.– Իրան (32րդ) | 635 |
| 30.– Թունուզ (29րդ) | 635 |
| 32.– Ճափոն (33րդ) | 634 |
| 33.– Նորվեկիա (31րդ) | 631 |
| 34.– Սէուտ. Արաբիա (34րդ) | 627 |
| 35.– Էքուատոր (36րդ) | 624 |
| 37.– Հար. Ափրիկէ (36րդ) | 623 |
| 38.– Լեհաստան (38րդ) | 615 |
| 39.– Մարոք (39րդ) | 612 |
| 40.– Հար. Քորէա (41րդ) | 603 |
| .................................... | |
| 42.– Սենեկալ (43րդ) | 599 |
| .................................... | |
| 50.– Չինաստան (51րդ) | 566 |
| .................................... | |
| 93.– Սուրիա (89րդ) | 449 |
| 94.– Լիբանան (94րդ) | 445 |
| .................................... | |
| 101.– Հայաստան (99րդ) | 443 |

*ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ*

*ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԴՐՈՂ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ*

ՄԻՕՐԵԱՅ ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԱՅՆՃԱՐ

Դաստիարակչական պտոյտ դէպի՝
●Պատմական բերդ
●Յուշակոթող - Համալիր
●Ագարակ - ձկնարան
●Պասքեթպոլի մրցում
●Դաշտային խաղեր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 18 Մայիս 2002, Այնճարի Հայ Աւետարանական երկրորդական վարժարանի շրջափակը:

